ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2026 թվականի N 882 - Ն

«ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված դեպքերում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության գնահատողի ընտրության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված դեպքերում, երբ գնահատման ծառայությունների դիմաց հատուցումն իրականացվելու է պետական բյուջեի հաշվին, այդ ծախսերը պլանավորվում և կատարվում են որպես գնում չհանդիսացող ծախսեր:

3. Կադաստրի կոմիտեի ղեկավարին՝ սույն որոշման հրապարակման պահից հետո չորսամսյա ժամկետում ապահովել սույն որոշմամբ նախատեսվող ծրագրի գործարկումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հինգ ամիս հետո:

5. Սույն որոշմամբ նախատեսված ծրագրի գործարկման օրվանից հետո մեկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան սույն որոշման 4-րդ կետով սահմանված՝ դրա ուժի մեջ մտնելու օրը, Կադաստրի կոմիտեն ծրագրում մուտքագրում է տվյալ օրվա դրությամբ «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով հաշվառված գնահատողների վերաբերյալ տվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ